
ՄԱԿԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԻՍՊԱՆԱԿԱՆ
ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Զ. Ռ.

Հրաշապատում հեքիաթում մակդիրի ուսումնասիրությունը սերտորեն կապված է հեքիաթի գեղարվեստական պատկերավորության հետ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մակդիրը, լինելով հեքիաթի ողջ գեղարվեստական համակարգի մաս, առավելապես օգտագործվող ոճական հնարք է: Որպես ոճական միջոց՝ մակդիրի ընդհանուր նշանակությունը պատմության զարդարումն է, որը նրա հիմնական գործառնություններից է: Կարևոր գործառնությո է նաև հեքիաթի գեղագիտական բովանդակության բացահայտումը¹:

Ժողովրդական բանահյուսությունը մշակել է մակդիրների մի ամբողջ համակարգ: Ընդհանուր բանահյուսական որոշ մակդիրներ գործածվում են տարբեր ժանրերում, իսկ մյուսները բնորոշ են միայն քնարերգությանը²:

Բանահյուսական տարբեր ժանրերին հատուկ են մշտական մակդիրները, որոնք առանձնացնում են մի շարք առարկաների և երեվոյթների ընդհանուր հատկանիշը: Մշտական մակդիրների պատկերավորությունը հիմնված է առավել բնորոշ և ցանկալի հատկանիշի ընդգծման վրա, որն էլ սահմանում է հեքիաթում նրա հիմնական գեղարվեստական գործառնությոը՝ պատմության բարձր տոնը և հուզական արտահայտչականության ուժգնացումը:

Ըստ ռուս բանագետ Պ. Ուխովի՝ մշտական մակդիրները տիպականացման միջոց են, իսկ եզակի մակդիրները, որոնք զուգակցվում են որոշակի բառի հետ միայն որոշակի համատեքստում, կերպարի անհատականացման միջոց են³:

Հեքիաթներում մակդիրներն ունեն բավական հարուստ կազմ: Այդ հանգամանքը, ըստ երևույթին, պայմանավորված է նրանով, որ հեքիաթը մեզ տեղափոխում է կախարդանքի և հրաշքների աշխարհ, որտեղ համատեղվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ արտաքին աշխարհի պատկերումը հերոսների ընկալմամբ, ինչպես նաև նրանց ներաշխարհի բացահայտումը: Հեքիաթներում առկա են երկու կարգի մակդիրներ՝ ընդհանուր ժանրային, որոնք հանդիպում են բանահյուսության գրեթե բոլոր ժանրերում, և ժանրային՝ տվյալ դեպքում բնորոշ միայն հեքիաթներին: Դրանց կազմը, ըստ երևույթին,

¹ Водерникова Н. М. Эпитет в волшебной сказке (Эпитет в русском народном творчестве, М. 1980, с. 120).

² Астафьева Л. А. Эпитет в частушках (նույն տեղում, էջ 93).

³ Ухов П. Д. Постоянные эпитеты в былинах как средство типизации и создания образа (Основные проблемы эпоса восточных славян, М., 1958, с. 171).

որոշվել է բանավոր ժողովրդական ստեղծագործության ծաղկման շրջանում⁴։ Ընդհանուր բանահյուսական մակդիրներից հեքիաթում ներառվում են առավել չեզոքները, որոնք երևույթին կամ առարկային տալիս են միայն ընդհանուր բնութագիր։

Մակդիրների սահմանազատումն ընդհանուր բանահյուսականի և ներժանրայինի հնարավոր է դրանց բառային նշանակության և լայն օգտագործման հիման վրա։ Գեղարվեստական գործառույթների տեսանկյունից այդ դասակարգումը խիստ պայմանական է, քանի որ ընդհանուր մակդիրները հեքիաթում ստանում են ժանրի յուրահատկությունով պայմանավորված առանձնահատկություններ. այսինքն՝ ներմուծվելով հեքիաթների մեջ՝ ստանում են ներժանրային մակդիրների բոլոր հատկանիշները։ Մակդիրը հեքիաթների պատկերավորման համակարգի առավել հաճախակի օգտագործվող բաղադրիչն է, որը բնութագրվում է ժողովրդական լեզվամտածողության հոգեհարազատությամբ և անմիջականությամբ։ Հեքիաթներում հաճախ մակդիրների իմաստային բովանդակությունը նպաստում է հեքիաթի հետագա զարգացմանը։ Շատ դեպքերում էլ մակդիրները կարող են կապված չլինել հեքիաթի հիմնական գաղափարի հետ, այլ միայն նրան հաղորդել լրացուցիչ իմաստային նրբերանգներ։

Այժմ անդրադառնանք իսպանական հրաշապատում հեքիաթներում գործածվող մակդիրներին ու մակդիրային բառակապակցություններին՝ իրականացնելով վերջիններիս դասակարգումը՝ ըստ խմբերի։

Այսպես, մակդիրների մի մեծ խումբ որոշում է հեքիաթային հերոսների գործողությունների վայրը, որն իրական աշխարհից տարբերվող հատուկ աշխարհ է։ Վայրը, ուր ընկնում է հերոսը, հաճախ որոշում է հետագա իրադարձությունների բնույթը, և այդ պատճառով դրանք կարող են դիտարկվել որպես խորհրդանշական վայրեր։ Իսկ մակդիրն ընդգծում է տվյալ տարածության գործառույթային նշանակությունը⁵։

Օրինակ՝

Y cuando riñó con su novia se iba al **Castillo de Irás y no Volverás**.

Y ya llegó a **un palacio abandonao** y se metió en él pa pasar la noche.

Y en **un reino vecino** vivía un hijo de un conde.

Հեքիաթի գեղարվեստական տարածությունը հարաբերակցվում է հեքիաթի գեղարվեստական ժամանակի հետ, որն արտահայտվում է հետևյալ ժամանակային մակդիրների միջոցով՝ *largo*(երկար), *poco* (քիչ), *mucho*(շատ) և այլն։

Օրինակ՝

Y esperaron por **largo tiempo** hasta que al fin llegó.

Y a los **pocos días** ya el lagarto le había comido los pechos.

⁴ Кравцов Н. И. Эпитет в лирических бытовых песнях (Эпитет в русском народном творчестве, с. 58).

⁵ Sté u Aurelio M. Espinosa. Cuentos populares recogidos de la tradición oral de España, Madrid, 2009, p. 362-439.

⁶ Ведерникова Н. М. Эпитет в волшебной сказке (Эпитет в русском народном творчестве, с. 123-124).

Y allí la tuvieron por **mucho tiempo** en el palacio.

Ելնելով հեքիաթի ժանրին բնորոշ եռապատկման առանձնահատկությունից՝ իսպանական հեքիաթներում հաճախ գործածվում են դասական թվականներով արտահայտված մակդիրներ՝ առաջին, երկրորդ, երրորդ և այլն:

Օրինակ՝

Y **la primera noche** que fue el hijo del rey al baile fue Juana.

La hija se puso er **segundo traje**.

Y Juanillo abrió **la tercera puerta** y oyó una voz que le dijo.

Այս դասակարգման ամենամեծ խումբն են հեքիաթներում տարբեր առարկաներ և երևույթներ նկարագրող մակդիրները:

Օրինակ՝

Y les pone una **cena muy güena** y invita a sus padres a la cena.

Y allí enfrente del palacio del rey hicieron **un palacio más grande y más bonito**.

Y del pozo ande estaba enterrao el jarancón salieron **unos repollos muy hermosos**.

Y los ladrones se pasaron y la dejaron, porque creyeron que era **cosa mala**.

Առավել հաճախ հանդիպում են bonito (գեղեցիկ), hermoso (գեղեցիկ), buen, buena (լավ) (ինչպես նաև güena ձևը, որը buena ածականի հին տարբերակն է), mal, mala (վատ), grande (մեծ) մակդիրները:

Հեքիաթային մակդիրների առանձնահատկությունը, նրանց սերտ կապը հեքիաթների բովանդակության հետ արտահայտվում է նաև հերոսներին բնութագրող մակդիրների դիտարկման ժամանակ: Իսպանական հեքիաթներում մակդիրները հաճախ օգտագործվում են հերոսների ներքին բնութագրի համար՝ մատնանշելով նրանց բնավորության տարբեր գծեր: Նման դեպքերում հաճախ գործածվում են bueno (լավ) և malo (վատ) մակդիրները:

Օրինակ՝

Y la **mala ama** llegó al palacio del rey con su hija.

Y la **hija envidiosa** y la **mala madrastra** la vían y staban llena de envidia, pero como staba tan bien vestía no la conocían.

Y se sentaron a la mesa a comer, y el primer cacho que iba a comer **el novio mentiroso**, llega la perra del joven y se lo quita de la mano.

Y era muy **buena criada** y la querían mucho.

Մակդիրները կարևոր դեր ունեն հատկապես հերոսների արտաքին տեսքի բնութագրման ժամանակ, ընդ որում, առավելապես գերիշխում են նրանց գեղեցկությունն ընդգծող մակդիրները:

Օրինակ՝

Y acecharon los perros y vieron que subían siempre con la comida y se daban a una **hermosa dama** que estaba colgada del árbol.

Y pusieron la cena y se sentaron a la mesa, y el rey miraba y remiraba a aquella **mujer tan guapa**.

Y le extrañó mucho ver a su **mujer tan fea y negra**.

Y un día dejó el rey la puerta abierta y entró una criada en la habitación y vio a **la mocita guapa** que estaba dentro de la caja.

Y cuando ya iban llegando al palacio se abrió la caja y vio el mozo a su novia, que se había vuelto **una princesa hermosísima**.

Ինչպես տեսնում ենք, հերոսների արտաքին տեսքը բնութագրող ամենագործածական մակդիրներն են hermoso-ն (զեղեցիկ) և guapo-ն (զեղեցիկ):

Արտաքին բնութագրերը կարող են ամբողջապես կառուցվել նաև հոմանիշ մակդիրների վրա: Տվյալ դեպքում դրանք օգտագործվում են ըստ հուզական աստիճանի՝ չեզոքից առավել վառ, դրականը կամ բացասականը: Օրինակ՝

Ya ves qué **hermosas y preciosas toallas** han traído tus hermanos.

Y cogió la mona y lo envolvió en **unos trapuchos feos y asquerosos** y se lo dio al mozo.

Խոսքին առավել պատկերավորություն և ուժգնություն են հաղորդում հակառակ իմաստ արտահայտող կամ հականիշներով կառուցված մակդիրները: Դրանք ոճագիտության մեջ հայտնի են օքսիմորոն (նրբաբանություն) անվանումով:

Օրինակ՝

El pobre diablo salió hecho peazos de las heridas que llevaba.

Մակայն նման մակդիրները իսպանական հրաշապատում հեքիաթներում քիչ են հանդիպում:

Ոչ պակաս գունագեղությամբ է ներկայացվում նաև հերոսների հագուստը: Այստեղ առավելապես կարելի է հանդիպել գունային, ինչպես նաև ձև բնութագրող մակդիրների: Սրանք հիմնականում լրացնում են լայն գործածություն ունեցող traje (կոստյում) գոյականին:

Օրինակ՝

- Y la mayor le dijo que le trajera **un vestido azul de piedra**, y la menor uno verde de piedras.

- Varilla de virtud, por la virtud que Dios te ha dao dame **un traje de seda blanca** que no haya otro como él.

- Varilla de virtud, por la virtud que Dios te ha dao dame **un traje de estrellas y brillantes** que no haya en el mundo como él .

Առանձին խումբ են հերոսների տարիքը մատնանշող մակդիրները՝ mayor (ավագ), menor (կրտսեր), mediano (միջնեկ) և այլն:

Քանի որ հեքիաթների հերոսները մեծ մասամբ երիտասարդներ են՝ տղա, աղջիկ, որդի, դուստր, արքայազն, արքայադուստր և այլն, այդ պատճառով էլ հիմնականում գերակշռում են երիտասարդ տարիքը մատնանշող մակդիրներ:

Օրինակ՝

- ¡Ay, si yo pudiera vender a mi **hija mayor!**

Conque claro, se fue el padre en su viaje y lo primero que encontró fue un árbol y se apeó y cogió una varilla pa llevársela a **la hija menor**.

Y el segundo día enviaron con el almuerzo a **la hija mediana**.

Y el padre quedando viudo llevó a la casa un ama que tenía **una niña pequeña**.

Բսպանական հրաշապատում հեքիաթներին բնորոշ են նաև գրված խավոր և երկրորդական հերոսների անուններով արտահայտված մակդիրները:

Օրինակ՝

María del Carmen, María del Rosario, Estrella de Oro, Estrellita de Oro, Juan el Oso, Juanito el Oso, Juanillo el Oso, Juan sin Miedo, Periquito sin Miedo, El Príncipe Español, Blanca Flor, Virgen María, Ave María Purísima, Virgen Santísima, la Piedra Cervera, San Pedro, San José

Հայնորեն տարածված են նաև հերոսների սոցիալ-տնտեսական վիճակը բնորոշող՝ հատկապես «աղքատ» և «հարուստ» մակդիրները, որոնք կա՛մ բնորոշում են գլխավոր հերոսին, կա՛մ էլ հակադրում երկու հերոսներին:

Օրինակ՝

Este era **un pobre cisquero** que tenía a su mujer y ocho hijos, y ya apenas podía ganar con que vivir vendiendo ciscos.

Pero tenía vergüenza decirles a sus padres que se iba a casar con **una muchacha pobre**.

-¡Ay, qué **niño más rico!**

Բսպանական հեքիաթներում հաճախ գործածվում են կրկնակի մակդիրներ, մինչդեռ եռակի մակդիրները սակավ են հանդիպում, իսկ քառակի և ավելի մակդիրները՝ հազվադեպ:

Օրինակ՝

Y fueron y le dijeron al rey que encima de una zarza estaba **una niña muy guapa, muy guapa** y sin brazos.

Y entonces se puso **una tormenta muy grande, muy grande**.

-Vete por **una calle, oscura, oscura, oscura**, y le hallarás.

-Vete por aquella **puerta clara, clara, clara**, y allí saldrán a abrirte.

Հեքիաթներում, որպես կանոն, ավելի հաճախ կարելի է հանդիպել միարմատ բառերից կազմված պարզ մակդիրների, սակայն բաղադրյալ մակդիրները նույնպես զգալի են:

Օրինակ՝

Conque ya una vez tuvo que ir el padre a **un viaje mu largo**.

Entre usted y coja un poco de **agua bendita**.

Y a la cueva iba todos los días **un ángel en forma de perro** a llevarla la comida.

Pero ahora tienes que hacerme un **molino con siete piedras**.

Գնահատիչ, ինչպես նաև հուզական տարրեր պարունակող մակդիրները հաճախ գործածվում են *ito, ita, ite* նվազական-փառաբանական վերջածանցներով, որոնք մակդիրներին հաղորդում են հուզական նրբերանգ՝

⁸ Яцук Е. И. Эпитет в хороводных песнях (Эпитет в русском народном творчестве, с. 52).

Օրինակ՝

Y allí en el chozo del vaquerito dio a luz **un niño y una niña muy guapitos**.

Sólo le dieron **un orinal muy pequeño**.

Y se cortó **el dedo chiquitín** y con él abrió la puerta.

Հեքիաթներում մակդիրները հիմնականում հանդես են գալիս ուղիղ իմաստով, սակայն քիչ չեն նաև փոխաբերական իմաստով մակդիրները⁹:

Օրինակ՝

Y entonces salió la otra novia y le preguntó cuánto quería por las **gallinas de oro**.

-Mira; si quieres desencantar a tus hermanitos, anda a aquella **montaña de cristal** donde viven en la casa del enano, y lleva contigo una calabaza.

-Pu, mira; de aquel lao e los siete mares hay **una serpiente de siete cabezas**.

Մակդիրները հաճախ գործածվում են նաև բնությունը նկարագրելիս:

Օրինակ՝

Y ya llegó ande había una fuente y **un árbol muy alto**.

Y el demonio se apareció **un monte muy espeso** que nadien lo podía pasar, nil as fieras siquiera.

Y a los dos días se encontró **un jardín muy hermoso** y el caballo le dijo.

Մեծ թիվ են նաև կախարդական, հաճախ վտանգավոր վայրերի և առարկաների նկարագրության դեպքում օգտագործվող մակդիրները:

Օրինակ՝

-A mí quiero que me traigas **una piedra de dolor y un cuchillo de amor**.

Y la puerquecilla entonces estaba detrás e la puerta y ai mismo cogió su **varita de las siete virtudes**.

Quédate viendo por onde yo me voy y me sigues después y llegarás al **Castillo de Siete Rayos de Sol**.

Y cuando riñó con su novia se iba al **Castillo de Irás y no Volverás**.

Պատկերավոր բնութագրություններում էական նշանակություն ունեն առարկայի ձևը և նյութը ներկայացնող մակդիրները, որոնք պատկերում են հերոսներին շրջապատող կենցաղային իրերը, նրանց հանդերձանքը, արտաքին առանձնահատկությունները:

Օրինակ՝

Y ya la hicieron **una caja de cristal**.

Ya me voy, y pa encontrarme tienes que gastar siete pares de **zapatos de hierro**.

Ves aquella **piedra de mármol**?

Այս խմբում հատկապես հարկ է առանձնացնել իսպանական հրաշապատում հեքիաթներում հանդես եկող “de oro” (ոսկե) “de plata” (արծաթե) մակդիրներով գոյականները:

Օրինակ՝

⁹ Савушкина Н. И. Эпитет в бытовой сказке (նույն տեղում, էջ 141).

Y diciendo esto, le dio un talegon lleno de **monedas de oro y plata**.

Y la regaló **un anillo de oro**.

-Mira, si me das tu **sortija de plata** te hilo toda esta paja en oro.

Առանձնանում են նաև գունային մակդիրները, որոնք հանդես են գալիս իրենց ավանդական ընկալմամբ:

Օրինակ՝

Y se presentó **el caballo blanco** u se fue al baile.

Y esta vez Juana se puso **el traje verde** y se fue al baile.

-Muchas **piedras negras** y todo muy feo.

Առավել հաճախակի գործածվող գունային մակդիրներից են «սևը» և «սպիտակը». առաջինը հանդես է գալիս բացասական, իսկ երկրորդը՝ դրական հարանշանակությամբ:

Բսպանական հրաշապատում հեքիաթներում հանդիպում են նաև մարմնի մասեր պատկերող մակդիրներ:

Օրինակ՝

Y sus padres le dijeron que era una deshonra casarse con **una mujer sin brazos**, que no podía criar a sus hijos ni nada.

A mí me guarda **una serpiente de siete cabezas** que puede ver a todas partes a un tiempo.

Բավական մեծ խումբ են կազմում caballo (ձի) գոյականի հետ հանդես եկող մակդիրները՝

Օրինակ՝

Conque otro día le buscaron al rey otro **caballo mejor**.

Le buscaron al rey **el caballo mejor y más ligero** del reino.

Y dame un coche con todas las músicas del mundo tirao por **caballos de los más hermosos y corredores** del mundo.

-Pu na, hijo mío; no hay más que cojas **un buen caballo**.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «ձի» գոյականի հետ հանդես եկող մակդիրներն ունեն դրական հարանշանակություն: Այդ առումով առավել հաճախ հանդիպում են negro (սև), blanco (սպիտակ), bonito, hermoso (գեղեցիկ), mejor (լավագույն) մակդիրները:

Հեքիաթներում մակդիրները լինում են թե՛ նախադաս և թե՛ հետադաս:

Օրինակ՝

Y a media noche le dieron **unos dolores fuertes** de vientre.

Y ya le vino otro **fuerte dolor** de vientre.

Բսպանական հրաշապատում հեքիաթներում առավել իշխող են հետադաս մակդիրները:

Այսպիսով, մակդիրը լեզվի պատկերավորման համակարգի անքակտելի բաղադրիչն է և գոյակցելով արտահայտչական մյուս միջոցների հետ՝ իսպանական հրաշապատում հեքիաթներում հիմնականում գործածվում է որպես տեսողական վառ պատկերների ստեղծման, դրանց լարվածության ու համապատասխան ռիթմի պահպանման, հերոսների և նրանց շրջապատող աշխարհի բազմապիսի բնութագրերի, հոգեկան նկարագրի և

**НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ УПОТРЕБЛЕНИЯ
ЭПИТЕТА В ИСПАНСКИХ ВОЛШЕБНЫХ СКАЗКАХ**

АЗИЗБЕКЯН З. Р.

Резюме

Исследование эпитета в испанской волшебной сказке тесно связано с исследованием поэтической образности сказки, поскольку эпитет – это наиболее употребимый стилистический прием и, помимо этого, часть всей художественной системы сказки. Эпитеты способствуют раскрытию эстетического содержания сказок. Для поэтики испанской народной сказки характерно использование постоянных или традиционных эпитетов. Эпитеты используются для характеристики внешности и душевных качеств героев, а также предметов и явлений окружающего мира.

**SOME PECULIARITIES
OF EPITHET USE IN SPANISH FAIRY TALES**

Z. AZIZBEKYAN

Abstract

Study of use of epithet in Spanish fairy tale is closely connected with the study of poetic figurative language of the fairy tale, as epithet has mostly stylistic application, and is part of the fairy tale structure. In general, epithet in the fairy tale is a stylistic tool to create vivacity, narrative embellishment, as well as reveal the aesthetic side of the tale. The use of traditional epithets that may be associated with poetic tradition of a given genre is a characteristic technique of the poetic style of the Spanish folktale. Epithets define the poetic description of outward and inward behavior of heroes and provide the objects and phenomena of the surrounding world.